



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՑՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 28(448) «30» հոկտեմբերի 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | ՅՈՒԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ | |
|-----|---|----|
| | ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ | |
| 571 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 10-ի N 424 որոշման մեջ փոփոխություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 23-ի N 921 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1141-Ն որոշումը. | 3 |
| 572 | «Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հուլիսի 16-ի N 577-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1142-Ն որոշումը..... | 5 |
| 573 | «Բնակչության պատասպարման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 23-ի N 363 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 1143-Ն որոշումը..... | 6 |
| 574 | ««Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 346-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1161-Ն որոշումը..... | 11 |
| 575 | «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1165-Ն որոշումը..... | 13 |
| 576 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 988-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1166-Ն որոշումը..... | 15 |
| 577 | «Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 12-ի N 1096-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1169-Ն որոշումը..... | 16 |
| | ՏԱՄՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ | |
| | ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ | |
| 578 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի փետրվարի 10-ի N 4-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Վիճակագրության պետական խորհրդի N 19-Ն որոշումը | 17 |
| 579 | «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության | |

| | | |
|--|--|----|
| | պետական խորհրդի 2016 թվականի հուլիսի 29-ի N 25-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Վիճակագրության պետական խորհրդի N 20-Ն որոշումը | 18 |
| 580 | ««Թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին» Ձև 1-ԹԱՇ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» ԱՀ Վիճակագրության պետական խորհրդի N 21-Ն որոշումը | 19 |
| ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ | | |
| ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ | | |
| 581 | ««Առողջություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 250-Ա հրամանը..... | 25 |
| 582 | «Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարի N 2079-Ա հրամանը..... | 26 |
| 583 | «Քաղաքաշինության բնագավառի լիցենզիայի գործունեության դադարեցման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարի N 2080-Ա հրամանը..... | 27 |
| 584 | «Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարի N 2123-Ա հրամանը..... | 28 |
| 585 | «Քաղաքաշինության բնագավառի լիցենզիայի գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարի N 2148-Ա հրամանը..... | 29 |
| 586 | «Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների գործունեության դադարեցման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարի N 2149-Ա հրամանը..... | 30 |
| 587 | ««ԱՐՄ ԳՐՈՒՊ ԱԼԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը լիցենզիաներ տրամադրելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 62 հրամանը..... | 31 |

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 հոկտեմբերի 2021թ.

N 1141-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 424 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 921 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 10-ի «Կառավարական հանձնաժողով ստեղծելու մասին» N 424 որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2005 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայրենիքին ակնառու ծառայություններ մատուցած անձանց համար դրամական պարգևատրում սահմանելու մասին» ՆՀ-238 հրամանագրով սահմանված՝ դրամական պարգևատրում նշանակելու համար ստացված առաջարկություններն ուսումնասիրելու և Արցախի Հանրապետության Նախագահին միջնորդություններ ներկայացնելու նպատակով ստեղծել կառավարական հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- Ա. Բեգլարյան Արցախի Հանրապետության պետական նախարար (հանձնաժողովի նախագահ)
- Ա. Պետրոսյան Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարար
- Մ. Հայրիյան Արցախի Հանրապետության առողջապահության նախարար
- Ա. Թովմասյան Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարար
- Լ. Ղարախանյան Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար
- Կ. Վարդանյան Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար
- Հ. Խանումյան Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
- Վ. Բաղդասարյան Արցախի Հանրապետության ֆինանսների նախարար»:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայրենիքին ակնառու ծառայություններ մատուցած անձանց ամենամսյա դրամական պարգևատրում նշանակելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահին միջնորդություններ ներկայացնող կառավարական հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» N 921 որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 4-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախարարությունների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը փոխարինել «Արցախի

Հանրապետության նախարարությունների և Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ» բառերով.

2) 5-րդ և 17-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պետական նախարարի» բառերով.

3) 6-րդ կետից հանել «, սակայն առնվազն կիսամյակը մեկ անգամ» բառերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 հոկտեմբերի 2021թ.

N 1142-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 16-Ի N 577-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հուլիսի 16-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 8-ի N 771-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 577-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) որոշման 2-րդ կետում «Հանրապետության» բառից հետո լրացնել «ներքին գործերի նախարարության» բառերը.

2) որոշմամբ հաստատված կարգի՝

ա. 54-րդ կետում «2000» թիվը փոխարինել «500» թվով,

բ. 55-րդ կետում «տարահանվողները» բառից հետո լրացնել «, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պատասպարման վայրերից» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 հոկտեմբերի 2021թ.

N 1143-Ն

ք. Ստեփանակերտ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՊԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 363 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 11-րդ, «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 5-րդ և 8-րդ հոդվածները և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել բնակչության պատսպարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների պետական ծառայությանը:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 23-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» N 363 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ
ԲՆԱԿՇՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են բնակչության պատասպարման կազմակերպման հիմնական պահանջները, պաշտպանական կառույցների տեսակները և դրանց պահպանման ու շահագործման կարգը:

2. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) պատասպարում՝ զենքի տեսակների կիրառման կամ կիրառման սպառնալիքի դեպքում մարդկանց կյանքն ու առողջությունն ապահովելու նպատակով բնակչությանը պաշտպանական կառույցներում ժամանակավոր տեղավորումն ու կենսապահովումը.

2) պաշտպանական կառույց՝ քաղաքաշինության ոլորտի նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան շենքի նկուղային կամ բնակավայրի տարածքում առանձին կառուցված ստորգետնյա շինություն՝ ապաստարան, հակաճառագայթային կամ պարզագույն թաքստոց կամ այլ քաղաքաշինական կառույց, որը պատասպարում է մարդկային, տեխնիկական և նյութական ռեսուրսները տարատեսակ զենքի կիրառումից.

3) ապաստարան՝ պաշտպանական կառույց, որը նախատեսված է զանգվածային ոչնչացման զենքի խոցման գործոնների ազդեցությունից մարդկանց պատասպարման ու այնտեղ գտնվելու ընթացքում նրանց կենսագործունեության ապահովման համար.

4) հակաճառագայթային թաքստոց՝ պաշտպանական կառույց, որը նախատեսված է պատասպարվողներին իոնացնող ճառագայթման ներգործությունից պաշտպանելու համար.

5) պարզագույն թաքստոց՝ շենքերի և շինությունների նկուղներ, կիսանկուղներ, ստորգետնյա շինություններ, արագ կառուցվող թաքստոցներ, որոնք նախատեսված են պատասպարվողների վրա հարվածային ալիքի ազդեցությունը նվազեցնելու և բեկորներից պաշտպանելու համար.

6) նկուղ (նկուղային հարկ)՝ հարկ, որի հատակի նիշը ցածր է գետնի հատակագծային նիշից, մայթից կամ սավաճքից՝ դրանում տեղավորված սենքի բարձրության կեսից ավելի չափով.

7) կիսանկուղ՝ հարկ, որի հատակի նիշը ցածր է գետնի հատակագծային նիշից, մայթից կամ սավաճքից՝ դրանում տեղավորված սենքի բարձրության կեսի չափով:

3. Արտակարգ իրավիճակներում բնակչության պատասպարումը պաշտպանական կառույցներում մարդկանց կյանքի և գործունեության ապահովման հիմնական միջոցն է:

4. Արտակարգ իրավիճակներում բնակչության պատասպարումն իրականացվում է հետևյալ պաշտպանական կառույցներում.

1) ստորգետնյա հատուկ շինություններ, ապաստարաններ, թաքստոցներ (հակաճառագայթային, պարզագույն, նկուղներ, կիսանկուղներ, խորացված տարածքներ, հանքախորշեր, ստորգետնյա անցումներ).

2) բնակելի ֆոնդի տարածքներ (առաջին հարկի տարածքներ՝ հարմարեցված որպես հակաճառագայթային թաքստոցներ, նկուղներ, կիսանկուղներ):

5. Բնակչության պատասպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝

1) պաշտպանական կառույցների վաղորոք շինարարություն.

2) պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստ վիճակում.

3) պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը.

4) արագ կառուցվող թաքստոցների և հակաճառագայթային թաքստոցների շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ.

5) պաշտպանական կառույցներին բնակչության նախօրոք ամրագրում:

6. Պաշտպանական կառույցների համակարգը, որն ապաստարանների և թաքստոցների ամբողջություն է, կախված պաշտպանական կառույցների

տեղակայման վայրից և նշանակությունից, ապահովում է բնակչության պատասպարումը՝

1) ապաստարաններում՝ Ստեփանակերտ քաղաքի և շրջկենտրոնների կենսագործունեությունն ապահովող և պատերազմի ժամանակ իրենց գործունեությունը շարունակող կազմակերպություններում աշխատողներին և ծառայողներին, Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված հատուկ կարևորության և քիմիական վտանգավոր օբյեկտների աշխատողներին ու ծառայողներին՝ անկախ նրանց տեղակայման վայրից.

2) նկուղային և այլ խորացված տարածքներում, հանքախորշերում, պատասպարման նպատակով նախատեսված շենքերի և շինությունների առաջին հարկերում, պարզագույն թաքստոցներում՝ մնացած բնակչությանը:

7. Խաղաղ ժամանակ պաշտպանական կառույցները, համաձայն քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերի պահանջների, կարող են օգտագործվել տնտեսական նպատակներով, որի ժամանակ պետք է ապահովվի շինությունների և կառուցվածքների պահպանությունն ավերածությունից ու խոնավությունից և պաշտպանական կառույցները պատասպարվողների ընդունման համար ժամանակին պատրաստականության բերումը:

8. Պաշտպանական կառույցների օգտագործումը տնտեսական նպատակով թույլատրելի է պաշտպանական կառույցների ծավալի 40%-ի չափով և ավելորդ գույքից ազատման ժամանակը պետք է լինի ոչ ավելի, քան 6 ժամ:

9. Պաշտպանական կառույցները տարբերվում են կառուցման ժամկետներով՝

1) խաղաղ ժամանակ կառուցվող ապաստարաններ և հակաճառագայթային թաքստոցներ.

2) պատերազմի սպառնալիքի ժամանակ կառուցվող պաշտպանական կառույցներ, արագ կառուցվող թաքստոցներ և պարզագույն թաքստոցներ:

10. Արագ կառուցվող թաքստոցները կառուցվում են ամենասեղմ ժամկետներում՝ առավելագույնս օգտագործելով առկա հավաքովի կառուցվածքներն ու նյութերը, պարզեցված սարքավորումները:

11. Արագ կառուցվող պաշտպանական կառույցների տեղակայման վայրն ու թիվը որոշվում են քաղաքացիական պաշտպանության մարմինների կողմից ելնելով խաղաղ ժամանակ պաշտպանական կառույցներով բնակչության փաստացի ապահովվածությունից:

12. Պարզագույն թաքստոցները կառուցվում և հարմարեցվում են արտակարգ իրավիճակների և պատերազմների սպառնալիքի ժամանակահատվածում բնակչության այն մասի համար, որն ապահովված չէ պաշտպանական կառույցներով, որոնց շինարարության պլաններն ու ժամանակացույցերը վաղօրոք մշակվում են արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառում լիազորված մարմինների կողմից:

13. Պարզագույն թաքստոցների կառուցման բոլոր աշխատանքները համապատասխանեցվում են արագ կառուցվող շինությունների շինարարության, ինչպես նաև բնակչության տարահանման պլաններին:

2. ԲՆԱԿՇՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՊԱՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

14. Բնակչության կազմակերպված և ժամանակին պատասպարման համար պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունների ղեկավարներն արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառում լիազորված մարմինների հետ համատեղ անցկացնում են բնակչության, աշխատողների և ծառայողների պաշտպանական կառույցներին ամրագրման միջոցառումներ: Պաշտպանական կառույցների մուտքի վրա կախվում են ցուցատախտակներ, իսկ դեպի պաշտպանական կառույցներ տանող շարժման երթուղիների վրա՝ ցուցանշաններ:

15. Պաշտպանական կառույցների սպասարկման և պատասպարման կազմակերպման նպատակով դրանց կից ստեղծվում են փրկարար ուժեր (սպասարկող խմբեր և օղակներ), որոնց անձնակազմը պարտավոր է՝

1) ապահովել պաշտպանական կառույցների նախապատրաստումը պատասպարվողների ընդունման համար.

2) հետևել պաշտպանական կառույցները պատասպարվողներով լրացման և շահագործման ընթացքին.

3) իմանալ շահագործման և անվտանգության տեխնիկայի կանոնները պաշտպանական կառույցների բոլոր սարքավորումների շահագործման դեպքում:

4) կազմակերպել պատասպարվող բնակչության սնումը և բժշկական ապահովումը:

Ապաստարաններն ու թաքստոցներն սպասարկող խմբերի և օղակների կազմում կարող են ներգրավվել բոլոր աշխատունակ մարդիկ:

16. Պաշտպանական կառույցներում բնակչության պատասպարումը տեղի է ունենում քաղաքացիական պաշտպանության ազդանշաններով՝

1) «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում էլեկտրաշահակների միջոցով տրվում է ընդհատվող (3 անգամ տատանվող) ձայնային ազդանշան (3 բույն տևողությամբ), միաժամանակ բարձրախոսներով տրվում է «Օդային տագնապ: Պատասպարվել պաշտպանական կառույցներում» բովանդակությամբ համապատասխան հաղորդագրություն, կրկնօրինակելով կապի և ազդարարման բոլոր միջոցներով՝ էլեկտրաշահակների և բարձրախոսային (ստացիոնար և շարժական) սարքերով, հեռուստատեսությամբ, ռադիոհեռարձակմամբ, համացանցային կապով, հեռախոսակապով: «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում՝ բնակչությունը պետք է պատասպարվի պաշտպանական կառույցներում:

2) «Ուշադրություն բոլորին» ազդանշանի դեպքում էլեկտրաշահակների միջոցով տրվում է չընդհատվող ձայնային ազդանշան (2-3 բույն տևողությամբ), միաժամանակ ազդարարման միջոցներով տրվում է «Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին» բովանդակությամբ համապատասխան հաղորդագրություն (օրինակ՝ «Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին: Ճառագայթային վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին.....», «Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին: Հայտարարված է քիմիական տագնապ, վտանգ է սպառնում ... թաղամասերին, ... շենքերին...», «Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին: «Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին: Օդային տագնապի ավարտ: Դուրս գալ պաշտպանական կառույցներից ... (կամ կատարել ... գործողությունները)»):

17. Համապատասխան ազդանշան ստանալով պաշտպանական խմբերի և օղակների անձնակազմերը բերվում են պատրաստակաևության և ժամանելով իրենց աշխատատեղերը, պաշտպանական կառույցները պատրաստում են պատասպարվողների ընդունման համար:

18. Պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմիններն արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարմինների հետ համատեղ կազմակերպում են բնակչության պատասպարման համալիր միջոցառումներ:

19. Պաշտպանական կառույցներում բնակչության պատասպարումն իրականացվում է նախապես մշակված և հաստատված ամրագրման պլանների համաձայն:

20. Աշխատանքային հերթափոխի աշխատողներն ու ծառայողները օբյեկտների համապատասխան պաշտոնատար անձանց ղեկավարությամբ զբաղեցնում են պաշտպանական կառույցները՝ համաձայն օբյեկտի արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության պետի կողմից նախապես մշակված պլանների:

21. Հասարակական վայրերում գտնվող բնակչությունը պատասպարվում է ըստ գտնվելու վայրի՝ պաշտպանական կառույցներում օգտագործելով ստորգետնյա անցումները, շենքերի և այլ կառույցների առաջին հարկերը:

22. Պաշտպանական կառույցներով չապահովված բնակչությունը մասնակցում է պարզագույն թաքստոցների կառուցմանը, հետագայում դրանցում պատասպարվելու նպատակով՝ համաձայն պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից հաստատված պլանի:

23. Պաշտպանական կառույցները բերվում են պատրաստակաևության՝ պատասպարվողների ընդունման համար ազդանշան տալու պահից սկսված 12 ժամվա ընթացքում, իսկ քիմիական վտանգավոր օբյեկտներում, որոնք գտնվում են մշտական պատրաստակաևության վիճակում՝ անմիջապես:

24. Պաշտպանական կառույցներում տեղավորվում են կազմակերպված և արագ՝ կառույցի պարետի (ավագի) ցուցումով: Քաղաքացիական պաշտպանության ազդանշանից հետո համապատասխան մարմինների կողմից նախօրոք նշված ժամանակն սպառվելուն պես պաշտպանական կառույցներում մարդկանց տեղավորումը դադարեցվում է, դռները փակվում են:

25. Պաշտպանական կառույցներում անհրաժեշտ է խստորեն պահպանել սահմանված ռեժիմն ու կարգը: Պատասպարվողները պարտավոր են անվերապահորեն կատարել պարետի (ավագի) և հերթապահների բոլոր կարգադրությունները:

3. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՊԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

26. Պաշտպանական կառույցների նախապես պլանավորման, նախագծման, պահպանման, շահագործման և վերանորոգման միջոցառումների նյութատեխնիկական ապահովումն ու ֆինանսավորումն իրականացվում են Արցախի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների միջոցների հաշվին:

27. Կազմակերպությունները (անկախ կազմակերպարավական ձևից) պաշտպանական կառույցների պահպանումը, շահագործումը և վերանորոգման միջոցառումների նյութատեխնիկական ապահովումն ու ֆինանսավորումն իրականացվում են իրենց միջոցների հաշվին:

**ԱՐՑԱՄԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՍՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2021թ.

N 1161-Ն

ք. Ստեփանակերտ

**«ԿԱՆԱԶ ԱՐՑԱԽ» ԿԵՆՍՈՒՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 11-Ի N 346-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետը և 25-րդ հոդվածը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի նախագահին՝

1) կազմակերպության լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնհինգօրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով՝ դրա կազմում ընդգրկելով Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի, Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության, Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարության, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության և Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչներին.

2) լուծարման հանձնաժողովի ստեղծումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել կազմակերպության հետ կնքված ոչ բնակելի տարածքների անհատույց օգտագործման պայմանագրերի լուծումը, կազմակերպության համապատասխան փաստաթղթերի և գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների և գույքային իրավունքների հանձնումը լուծարման հանձնաժողովին.

3) հաստատել լուծարման հանձնաժողովի կողմից կազմված լուծարման հաշվեկշիռը.

4) կազմակերպության լուծարման աշխատանքներն ավարտելուց հետո Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել կազմակերպության գործունեության դադարեցման պետական գրանցման աշխատանքները:

3. Սահմանել որ կազմակերպության լուծարումից հետո՝

1) դրամական միջոցներն (եթե այդպիսիք կան) ուղղվելու են Արցախի Հանրապետության պետական բյուջե.

2) կազմակերպության մնացած գույքը ամրացնել «Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի աշխատակազմ» պետական հիմնարկին:

4. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի ««Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, ««Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» պետական ոչ

առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու, «Կովսական» պետական արգելոց, «Մոսխների պուրակ» պետական արգելավայր և «Կաչաղակաբերդ» ազգային պարկ ստեղծելու, «Կովսական» պետական արգելոցի, «Մոսխների պուրակ» պետական արգելավայրի և «Կաչաղակաբերդ» ազգային պարկի կանոնադրություններն ու սահմանների հատակագծերը և կոորդինատները հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1996 թվականի նոյեմբերի 19-ի N 237 որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի N 1053-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 346-Ն որոշման 4-րդ կետը, 5-րդ կետը, 6-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը և 7-րդ կետը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա 4-րդ կետը՝ կազմակերպության գործունեության դադարեցման պետական գրանցման պահից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2021թ.

N 1165-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 145-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՄԱՀՄԱՆՎԱԾ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

| Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառու- կան դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավոր- վող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելա- ցումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | | | |
|-----------|----------|-----|--|---|-------------------------|-------------|-------------------|
| | | | | Առաջին եռամ- սյակ | Առաջին կիսամ- յակ | Ինն ամիս | Տարի |
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ այդ թվում՝ | - | - | - | - |
| 04 | | | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | - | - | - | - |
| | 1 | | Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ | - | - | - | - |
| | | 1 | Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ | - | - | - | - |
| | | 01 | Տնտեսական զարգացման ծրագրեր | - | - | - | (70 000.0) |
| | | | ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտե- սության նախարարություն | - | - | - | (70 000.0) |
| | 2 | | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն | - | - | - | - |
| | | 1 | Գյուղատնտեսություն | - | - | - | - |
| | | 04 | Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում | - | - | - | (42 000.0) |
| | | | ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտե- սության նախարարություն | - | - | - | (42 000.0) |
| | | 11 | Գյուղատնտեսական միջոցառում- ների իրականացման ծրագրեր | - | - | - | 107 000.0 |
| | | | ԱՀ էկոնոմիկայի և գյուղա- տնտեսության նախարարություն | - | - | - | 107 000.0 |
| | | 14 | Արցախի Հանրապետությունում անասնապահության զարգացման խթանման ծրագիր | - | - | - | 5 000.0 |
| | | | ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտե- սության նախարարություն | | | | 5 000.0 |

ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2021թ.

N 1166-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 988-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 988-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«3. Տարածքային ստորաբաժանումներ

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ստեփանակերտի բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ասկերանի բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Մարտակերտի բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Մարտունու բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Հադրութի բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Շուշիի բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Շահումյանի բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Քաշաթաղի բաժին
Թիվ 1 նոտարական գրասենյակ
Թիվ 2 նոտարական գրասենյակ
Թիվ 3 նոտարական գրասենյակ
Թիվ 4 նոտարական գրասենյակ
Թիվ 5 նոտարական գրասենյակ
Թիվ 6 նոտարական գրասենյակ
Թիվ 7 նոտարական գրասենյակ
Թիվ 8 նոտարական գրասենյակ
Թիվ 9 նոտարական գրասենյակ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 հոկտեմբերի 2021թ.

N 1169-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1096-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 12-ի «Արցախի Հանրապետության տարածքում բնակչության բնակեցման և տնտեսական գործունեության վարման ապահովմանն ուղղված վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու և վերացնելու հատուկ պայմանները և ռեժիմը սահմանելու մասին» N 1096-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) հատուկ ռեժիմը՝

ա. 2021 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև նոյեմբերի 22-ը՝ կատարելով Ստեփանակերտ քաղաքում գործող բոլոր ուսումնական հաստատությունների գործունեությունը,

բ. 2021 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև նոյեմբերի 22-ը՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումն անցկացնելով հեռավար կամ առկայի հետ համակցմամբ,

գ. Հնարավոր բոլոր դեպքերում աշխատանքները կազմակերպել հեռավար՝ միաժամանակ ապահովելով գործառույթների անխափան իրականացումը:».

2) որոշման 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին կետ.

«1.1. Արցախի Հանրապետության առողջապահության, Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության, Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Արցախի Հանրապետության ներքին գործերի, Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարներին՝ ապահովել սույն որոշմամբ սահմանված հատուկ պայմանների կատարման նկատմամբ հսկողություն:».

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2021 թվականի հոկտեմբերի 29-ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 4-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 19-Ն

Ո Ր Ո Շ Մ Ա Ս

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության Վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի փետրվարի 10-ի «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը ու լրացման հրահանգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N18-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 4-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի «4. Նոյեմբեր ամսվա աշխատողների թվաքանակի բաշխումն ըստ հաշվարկված աշխատավարձի չափի» և «5. Աշխատողների և աշխատատեղերի շարժը» բաժիններն ուժը կորցրած ճանաչել.

2) որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«9.Ամսական հաշվետվությունը կազմված է երեք բաժիններից. Աշխատողների թվաքանակը և աշխատանքի վարձատրությունը (**բաժին 1**), Լրացուցիչ տեղեկություններ (**բաժին 2**), Կազմակերպության սեփականատերն ըստ բաժնեմասի (**բաժին 3**): Տարեկան հաշվետվությունը կազմված է չորս բաժիններից. Աշխատողների թվաքանակը և աշխատանքի վարձատրությունը (**բաժին 1**), Աշխատուժի վրա գործատուի կատարած ծախսերը (**բաժին 2**), Սոցիալական ապահովագրության նպաստներ (**բաժին 3**), Համատեղությամբ, կապալային կամ քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներ (**բաժին 4**)».

3) որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի «5. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՇԱՐՃԸ» և «8. ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍՆ ԱՄԲՈՂՁՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՇՎԱՐԿԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ» բաժիններն ուժը կորցրած ճանաչել:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

2021 թվականի հոկտեմբերի 29
ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

2021 թվականի հոկտեմբերի 29-ի

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 29-Ի N 25-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 20-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության Վիճակագրության պետական խորհուրդը **ա ղ ա ղ ա ղ** է:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի հուլիսի 29-ի ««Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» N 25-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի «2. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՇԱՐՇԸ» բաժինն ուժը կորցրած ճանաչել.

2) որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«9. Եռամսյակային հաշվետվությունը կազմված է երկու բաժիններից.

1) Աշխատողների թվաքանակը և աշխատանքի վարձատրությունը.

2) Համատեղությամբ, կապալային կամ քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողների թվաքանակը և աշխատանքի վարձատրությունը, ոչ լրիվ աշխատանքային օր (շաբաթ) աշխատողների հարկադիր պարապուրդում գտնվողների թվաքանակը».

3) որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի «V. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՇԱՐՇԸ» բաժինն ուժը կորցրած ճանաչել:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

2021 թվականի հոկտեմբերի 29
ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2021 թվականի հոկտեմբերի 29-ի

«ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏՍԵՂԵՐԻ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ
ԱՇԽԱՏՍԵՂԵՐԻ ՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ» ՁԵՎ 1-ԹԱՇ (ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ)
ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ
ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 21-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ղեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետով՝ Արցախի Հանրապետության Վիճակագրության պետական խորհուրդը **ս ք ո շ ու մ է**:

1. *Հաստատել* «Թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին» Ձև 1-ԹԱՇ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. *Հաստատել* «Թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին» Ձև 1-ԹԱՇ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգը՝ համաձայն N 2 հավելվածի:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

2021 թվականի հոկտեմբերի 29
ք.Ստեփանակերտ

ՁեՎ 1 ԹԱՇ
(եռամսյակային)



ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏՍԵՂԵՐԻ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ
ԵՎ ԱՇԽԱՏՍԵՂԵՐԻ ՇԱՐՇԻ ՄԱՍԻՆ
20 թ. _____ եռամսյակ

| |
|--|
| Ներկայացվում է համաձայն «Պետական վիճակագրության մասին» օրենքի, Արցախի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2020 թվականի հունվարի 8-ի N 1-Ն որոշման |
| Հաշվետվության ներկայացման ժամկետը՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը: |
| Ներկայացնում է _____ (ընդ անվանումը) |
| Գտնվելու վայրը _____ (գործունեության իրականացման վայրը) |
| Շրջանը _____ համայնքը _____ |
| Փաստացի գործունեության հիմնական տեսակը _____ I I I I I I I I (լրացվում է համաձայն S9S7 դասակարգի) |
| Պետական ռեզիստորում գրանցման (հաշվառման) համարը I I I I I I I I |
| Նույնականացման (իդենտիֆիկացիոն) ծածկագիրը I I I I I I I I I I |
| Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) I I I I I I I I I I |
| Հեռախոսահամար(ներ) _____ |
| Էլեկտրոնային փոստ _____@_____ |
| ՏՐԱՄԱՂԿԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՕՐԵՆՔՈՎ |
| Պետական վիճակագրության մասին ԱՀ օրենսդրության խախտումը վիճակագրական տեղեկություններ տրամադրողների, ինչպես նաև պետական վիճակագրություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց համար առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով: |

1. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՏՍԵՂԵՐԻ ՇԱՐՇԸ

| Անվանումը | Տողի համարը | Ընդամենը, մարդ | այդ թվում՝ ըստ պայմանագրի տեսակի | |
|--|-------------|----------------|----------------------------------|-----------------------------|
| | | | անորոշ ժամկետով | որոշակի ժամկետով/ սեզոնային |
| Ա | Բ | 1 | 2 | 3 |
| Աշխատողների թվաքանակը (առանց համատեղությանը և կապալային կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանք կատարողների) հաշվետու եռամսյակի սկզբի դրությամբ | 110 | | | |
| Ընդունվել են աշխատողներ հաշվետու եռամսյակում | 120 | | | |
| Ազատվել են աշխատողներ հաշվետու եռամսյակում (130.1+130.2+130.3) | 130 | | | |
| այդ թվում՝ աշխատողների թվաքանակի կրճատման հետ կապված | 130.1 | | | |
| աշխատողի նախաձեռնությամբ (սեփական կամքով) | 130.2 | | | |
| այլ պատճառներով (օրենքով սահմանված դեպքերում աշխատանքային տարիքը լրանալու, մահվան դեպքում և այլն) | 130.3 | | | |

| | | | | |
|--|-----|--|--|--|
| Աշխատողների թվաքանակը (առանց համատեղությամբ և կապալային կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանք կատարողների) հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ (110+120-130) | 140 | | | |
|--|-----|--|--|--|

2. ԶԲԱՂԵՑՎԱԾ ԵՎ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ

| Անվանումը | Տողի համարը | Ընդամենը, աշխատատեղ | այդ թվում՝ ստեղծված | |
|--|-------------|---------------------|---------------------|-----------------------------|
| | | | անորոշ ժամկետով | որոշակի ժամկետով/ սեզոնային |
| Ա | Բ | 1 | 2 | 3 |
| Աշխատատեղերի թիվը (զբաղեցված և թափուր) հաշվետու եռամսյակի սկզբի դրությամբ (ներառյալ՝ համատեղությամբ զբաղեցված աշխատատեղեր) | 210 | | | |
| Նոր (առաջին անգամ) ստեղծված աշխատատեղերի թիվը հաշվետու եռամսյակում | 220 | | | |
| Կրճատված աշխատատեղերի թիվը հաշվետու եռամսյակում | 230 | | | |
| Աշխատատեղերի թիվը (զբաղեցված և թափուր) հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ (210+220-230) | 240 | | | |
| տող 240-ից թափուր աշխատատեղերի (պահանջվող աշխատողների) թիվը | 240.1 | | | |

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՆ ԸՍՏ ԲԱԺՆԵՄԱՍԻ (ՆՇԵԼ)

| | | |
|-------------------------------------|-----|--|
| Պետություն, համայնք | 310 | |
| Իրավաբանական անձ / անձանց միություն | 320 | |

Ղեկավար

Կ.Տ

Լրացնող (գլխավոր հաշվապահ կամ այլ լիազորված անձ)

(ազգանուն, անուն)

(ստորագրություն)

(ազգանուն, անուն)

(ստորագրություն)

« _____ » _____ 20 թ.
(լրացման ամսաթիվ)

Հավելված N 2

Արցախի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 21-Ն որոշման

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

«ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ» ԶԵՎ 1- ԹԱՇ (ԵՌԱՄՍՅԱԿԱՑԻՆ) ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑՑՆԵՐ

1. Սույն հրահանգը սահմանում է «Թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին» Ձև 1-ԹԱՇ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության (այսուհետ՝ հաշվետվություն) լրացման կարգը:

2. Հաշվետվությունը ներկայացնում են Աշխատանքային օրենսգրքի 18-րդ հոդվածով սահմանված գործատուները (այսուհետ՝ սույն հրահանգի իմաստով՝ նաև

կազմակերպությունները)՝ իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները՝ համաձայն Արցախի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2020 թվականի հունվարի 8-ի N 1-Ն որոշմամբ սահմանված կարգի:

3. Հաշվետվության ներկայացման հետ կապված այլ հարցերը կարգավորվում են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

2. ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4. «Թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին» Ձև 1-ԹԱՇ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության հիմքում դրված մեթոդաբանության պահանջների իմաստով փաստացի գործունեության հիմնական տեսակ է համարվում գործունեության այն տեսակը, որը հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության աշխատողների ընդհանուր թվաքանակում ունեցել է առավել մեծ տեսակարար կշիռ:

5. Հաշվետվությունը կազմված է երեք բաժիններից.

1) Աշխատողների թվաքանակը և աշխատատեղերի շարժը.

2) Զբաղեցված և թափուր աշխատատեղեր.

3) Կազմակերպության սեփականատերն ըստ բաժնեմասի, և լրացվում է տարին չորս անգամ՝ **հունվար-մարտ, ապրիլ-հունիս, հուլիս-սեպտեմբեր, հոկտեմբեր-դեկտեմբեր** ժամանակահատվածների համար:

3. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

6. Աշխատողների թվաքանակում ներառվում են տվյալ կազմակերպությունում աշխատանքային պայմանագրի հիման վրա անորոշ և որոշակի ժամկետով աշխատանք կատարող **վարձու աշխատողները**՝ համաձայն Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի, բացառությամբ համատեղությամբ աշխատողների:

7. **Աշխատողների թվաքանակը պահի դրությամբ** կազմակերպության աշխատողների թվաքանակն է հաշվետու եռամսյակի **սկզբի** (հունվարի 1, ապրիլի 1, հուլիսի 1, հոկտեմբերի 1) կամ հաշվետու եռամսյակի **վերջին օրվա** (մարտի 31, հունիսի 30, սեպտեմբերի 30, դեկտեմբերի 31) դրությամբ հաշվի առնելով նաև այդ օրն աշխատանքի ընդունվածների և աշխատանքից ազատվածների թվաքանակների տարբերությունը:

1) **Աշխատողների թվաքանակը հանգստյան, տոնական կամ հիշատակի (ոչ աշխատանքային) օրերի համար** ընդունվում է նախորդ աշխատանքային օրվա թվաքանակին հավասար:

2) **Աշխատողների թվաքանակի մեջ ներառվում են** նաև բացակա (հիվանդության, հղիության և ծննդաբերության, նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի հետ կապված արձակուրդում գտնվող) աշխատողները և նրանց փոխարինող աշխատողները:

8. Աշխատանքային պայմանագրի համաձայն ոչ լրիվ օր աշխատողների թվաքանակը հաշվվում է մեկ ամբողջ միավոր: Օրինակ, եթե ոչ լրիվ օր տևողությամբ աշխատողի աշխատաժամանակն օրվա մեջ կազմում է չորս ժամ, ապա այդ աշխատողը հաշվվում է ոչ թե 0.5, այլ՝ մեկ մարդ:

4. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏՍԵՂՆԵՐԻ ՇԱՐՇԸ

9. Աշխատողների շարժն աշխատանքի ընդունվելու և տարբեր պատճառներով աշխատանքից ազատվելու հետևանքով աշխատողների թվաքանակի փոփոխությունն է:

10. Աշխատանքի ընդունվածների թվաքանակում ներառվում են տվյալ կազմակերպությունում **հաշվետու եռամսյակի ընթացքում** Աշխատանքային օրենսդրությանը համապատասխան աշխատանքի ընդունվածները:

11. Աշխատանքից ազատվածների թվաքանակում ներառվում են **հաշվետու եռամսյակի ընթացքում** տվյալ կազմակերպությունում Աշխատանքային օրենսգրքի 110-113-րդ հոդվածներով սահմանված հիմքերով աշխատանքից ազատվածները (օրինակ՝ աշխատանքային պայմանագրի լուծում գործատուի կամ աշխատողի նախաձեռնությամբ, երկկողմանի համաձայնություն, զինվորական ծառայություն,

աշխատողի համաձայնությամբ այլ կազմակերպություն աշխատանքի փոխադրվել, կենսաթոշակի անցնել, աշխատողի մահ և այլն):

12. Աշխատանքի ընդունված և ազատված աշխատողների թվաքանակի մեջ չեն ներառվում նույն կազմակերպության սահմաններում պաշտոնի/հաստիքի փոփոխությունը, մեկ այլ ստորաբաժանում աշխատողի ներքին տեղափոխությունը:

13. Աշխատատեղերի թիվն աշխատողների փաստացի թվաքանակի (գրադեցված աշխատատեղերի), այդ թվում արտաքին համատեղությամբ աշխատողների և թափուր աշխատատեղերի հանրագումարն է՝ հաշվետու եռամսյակի սկզբի կամ վերջի դրությամբ:

1) **Հերթափոխով աշխատող կազմակերպություններում աշխատատեղերի թիվը բազմապատկվում է հերթափոխների թվով:** Օրինակ՝ երկու հերթափոխի դեպքում աշխատատեղերի փաստացի թիվը բազմապատկվում է 2-ով, երեք հերթափոխի դեպքում՝ երեքով:

2) **Աշխատատեղը**, որը գրադեցված է ոչ լրիվ օր աշխատողների կողմից, հաշվվում է մեկ ամբողջ միավոր, իսկ ոչ լրիվ օր աշխատողների թվաքանակը՝ սույն հրահանգի 8-րդ կետին համապատասխան:

14. Կրճատված աշխատատեղերի թիվը աշխատատեղերի / հաստիքների կրճատումն է **հաշվետու եռամսյակի ընթացքում** Աշխատանքային օրենսգրքի 111-րդ և 113-րդ հոդվածներով սահմանված հիմքերով (օրինակ՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխում, արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի կրճատում և այլն):

15. Թափուր աշխատատեղերի թիվը գործատուի կողմից պահանջվող աշխատողների թվաքանակն է նրանց **լրիվ գրադեցվածությունն** ապահովելու պայմանով: Թափուր աշխատատեղերի թվի մեջ ներառվում են միայն վարձատրվող թափուր պաշտոնները / հաստիքները:

16. Թափուր է համարվում այն աշխատատեղը, որը **հաշվետու եռամսյակի ընթացքում** գրադեցված չի եղել և գործատուն **կազմակերպության սահմաններից դուրս** հարմար թեկնածու գտնելու նպատակով իրականացրել է կոնկրետ միջոցառումներ՝ անցկացրել է հարցազրույցներ, ուղղակիորեն զբաղվել է թեկնածուի ընտրությամբ, թափուր հաստիքի մասին իրազեկել կամ հայտարարություն է տարածել աշխատանքի տեղավորման պետական, մասնավոր գործակալությունների միջոցով, զանգվածային լրատվամիջոցներով (համացանց, թերթեր, ամսագրեր, հեռուստա-ռադիո և այլն)՝ անկախ նրանից թափուր հաստիքը գրադեցվելու է անորոշ, թե որոշակի ժամկետով, լրիվ, թե ոչ լրիվ աշխատանքային օրով կամ շաբաթով:

1) **Թափուր է համարվում նաև** երկարատև ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայողների, նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի հետ կապված արձակուրդում գտնվողների ժամանակավոր թափուր աշխատատեղերը, եթե դրանք փոխարինված չեն մեկ այլ աշխատողով և գործատուն իրականացրել է կոնկրետ միջոցառումներ թափուր պաշտոնի / հաստիքի համալրման համար:

17. Թափուր չի համարվում այն աշխատատեղը.

1) որը **հաշվետու եռամսյակի ընթացքում** նախատեսված չի եղել համալրել.

2) որի համալրման համար **հաշվետու եռամսյակի ընթացքում** որևէ կոնկրետ միջոցառում չի իրականացվել.

3) որը թափուր է դարձել և միաժամանակ համալրվել **հաշվետու եռամսյակի ընթացքում**.

4) որը նախատեսված է գրադեցնել մեկ օր տևողությամբ.

5) որը նախատեսված է համալրել կազմակերպության աշխատողներից՝ ներսում.

6) որը գրադեցվելու է արձակուրդից (բոլոր տեսակների) վերադարձող աշխատողի կողմից.

7) որը գրադեցվելու է քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողի ներգրավմամբ.

8) որի համար աշխատողի հետ պայմանագիր կնքվել է, բայց դեռևս աշխատանքը չի սկսվել:

18. Նոր ստեղծված աշխատատեղ է համարվում հաշվետու եռամսյակում ոչ միայն **առաջին անգամ ստեղծված**, այլ նաև գործող կազմակերպությունում, օրինակ, արտադրության ընդլայնման, հերթափոխային աշխատանքների ավելացման, ինչպես նաև վերակազմավորման արդյունքում **նոր** / առաջին անգամ ստեղծված աշխատատեղը և այլն: Նոր ստեղծված աշխատատեղը կարող է լինել գրադեցված կամ՝ դեռևս ոչ, բայց որում

նախատեսված է ընդունել աշխատող՝ ոչ ուշ քան **հաշվետու եռամսյակին հաջորդող մեկ ամսվա ընթացքում**:

19. Նոր ստեղծված չի համարվում այն կազմակերպության աշխատատեղը, որը ստեղծվել է լուծարված և վերակազմավորված իրավաբանական անձի հիման վրա, հետևաբար՝ նոր ստեղծված աշխատատեղում աշխատող չեն համարվում այն աշխատողները, որոնք աշխատանքից ազատվել և նորից ընդունվել են վերակազմավորված կազմակերպությունում:

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«26» հոկտեմբերի 2021թ.

№ 250-Ա

ք. Ստեփանակերտ

**«ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2011 թվականի մարտի 3-ին **դեղատնային** գործունեության համար «Առողջություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված թիվ Կ-XX-000163 լիցենզիան:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին ապահովել՝

1) լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) «Առողջություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիցենզիայի բնօրինակի կցումը նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Մ. ՀԱՅՐԻՅԱՆ

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

08 հոկտեմբերի 2021թ.

N 2079-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 07.10.2021թ. եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով 'Լիցենզավորման մասին' ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

հ Ր ա մ ա յ ու մ ե մ

1. Ներքոնշյալ ընկերություններին տրամադրել լիցենզիաներ՝ ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

| N | Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը | Գործունեության տեսակը |
|----------|--|--|
| 1 | «Ա-Վ-Է» ՍՊԸ ք. Ստեփ., Բաղրամյան փող., շենք 3/20 | Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական |
| 2 | «ՔԻՐՍ-ՇԻՆ» ՍՊԸ ք.Ստեփ., Մ.Գոշ 7ա/1 | Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական |

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

08 հոկտեմբերի 2021թ.

N 2080-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության լիցենզավորող հանձնաժողովի 07.10.2021թ. եզրակացությունը և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի և 7-րդ կետի պահանջներով,

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Դադարեցնել ներքոնշյալ ընկերության տրամադրած լիցենզիայի գործունեությունը՝

| N | Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը | Լիցենզիայի համարը | Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակը |
|----------|--|--------------------------|---|
| 1 | «Շտիրլից և ԿՕ» ՍՊԸ ք. Հադրութ, Գ.Նժդեհի 7 | ՇԻ-122 | Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական |

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակ-կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

15 հոկտեմբերի 2021թ.

N 2123-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 23.09.2021թ. եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

հրամայում եմ՝

1. Ներքոնշյալ ընկերություններին տրամադրել լիցենզիաներ՝ ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

| N | Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը | Գործունեության տեսակը |
|---|---|---|
| 1 | «ԽԱՅ-ՏԵԿ» ՍՊԸ ք. Ստեփ., Բաղրամյան 5/3 | Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական |
| 2 | «ԶԻ ԸՆԴ ԶԻ ԿՈՆՍՏՐԱԿՇՆ» ՍՊԸ ք. Ասկերան, Դանիելյան 15 | Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական |
| 3 | «Ա.Լ.Ս» ՍՊԸ ք. Ստեփ. Օվյան 15 | Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական |

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

22 հոկտեմբերի 2021թ.

N 2148-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 21.10.2021թ. եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

հրամայում եմ՝

1. Ներքոնշյալ ընկերությանը տրամադրել լիցենզիա՝ ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

| N | Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը | Գործունեության տեսակը |
|---|---|---|
| 1 | «ԱԳՐՈ ԼԵՆԴ» ՍՊԸ ք. Ստեփ., Ա.Առաքելյան 4ա/1 | Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական |

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

22 հոկտեմբերի 2021թ.

N 2149-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության լիցենզավորող հանձնաժողովի 21.10.2021թ. եզրակացությունը և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի և 7-րդ կետի պահանջներով,

հ ր ա մ ա յ ու մ ե մ`

1. Դադարեցնել ներքոնշյալ ընկերություններին տրամադրած լիցենզիաների գործունեությունը`

| N | Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը | Լիցենզիայի համարը | Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակը |
|----------|--|--------------------------|---|
| 1 | «ԿՈՆՏՐԱԿՏ» ՍՊԸ ք.Ստեփ., Գյուրջան 23ա | ՇԻ-331 | Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի` բնակելի, հասարակական և արտադրական |
| 2 | «ԱԳՐՈ ԼԵՆԴ» ՍՊԸ ք.Ստեփ., Ա.Առաքելյան 4ա/1 | ՇԻ-1126 | Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի` հիդրոտեխնիկական |

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակ-կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«27» հոկտեմբերի 2021թ.

N 62

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՄ ԳՐՈՒՊ ԱԼԿՈ» ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 25-րդ և 43-րդ հոդվածներով, ինչպես նաև հիմք ընդունելով «ԱՐՄ ԳՐՈՒՊ ԱԼԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գտնվելու վայրը՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Սարդարյան փողոց, շենք 5, ՀՎՀՀ՝ 90050602) կողմից ներկայացված դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

«ԱՐՄ ԳՐՈՒՊ ԱԼԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել՝

1. Թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների, ինչպես նաև 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրության լիցենզիա՝ ՊԼ-0380 համարի տակ.

2. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրության լիցենզիա՝ ՊԼ-0381 համարի տակ:

Վ. Բ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ